

լու, տոանց զբաղելու՝ թէ ինչ պիտի պատահի այս մեր մոլորակին։ Այս փրկչութեան մոլեկոնութիւնը առավելարական կարգերու ուղղակի հետեանքն է։ Քանի որ այս դարը բարոյականութեան դարն է։ 1855 ին էր որ Taine կը գրէր. «Քրիստոնեական ոգիէն ասդին ամէն վարդապետութիւն կը կարծէ որ պարտադրեալ է հաստատելու թէ ինք կուգայ . . . մարդկային աշգը փրկելու։ Այդ վարդապետութիւնները պաշտպանած են իրենք զիրենք ոստիկաններու և հրապարակային ծանուցումներու փաստերով, յայտարարելով թէ իրենք է որ համաձայն են հանրային կարգի և բարոյականի, և թէ իրենց գալուստը արդէն ամենուրեք կը զգացուէր»։

Այսօրուան մտաւորականները կը կործեն թէ առաքեալներ են, և իբր այն՝ իրական ու ճշմարիտ մտաւորականներ։ Բայց այս իրողութիւնը մտաւորականութեան ինքնասպանութիւնն իսկ է։ Այս ալ շատ աւելի լուրջ պատճառներ ունի քան համաշխարհային տաղնապը։

ԺԻՒԼԻԷՆ ԲԵՆՏԱ ԹԵՂ. Տ. Վ.

Գ Ա Ր Ո Ւ Ն

Դարունն եկաւ։ Բրնուրիւնը կը խայտայ։ Լեռներ, դաշտեր դալարով են զարդարուն։ Հողը յուրի ա՛լ նրբաւէր կը կարգայ։ Իր ծոցին մէջ ապրող բոլոր տարրերուն։

Ձորերու մէջ ծաղկեայ գորգեր կը փռուին։ Իբր նեմավայր մեղուներու ոսկեգոծ։ Մաքրափետուր բուսունները կը շարունակեն Սաղարթախի ծառերու վրայ բազմահոծ։

Ամենուրեք կեանքը կ'եռայ դիւրանով, եւ զեփիւռին նուրբ մեղեդին մեղմօրօր Մայրիներու շուրջ կը յածի մեմաւոր։

Մարդիկ սակայն գեղեցկութեան տեսնանով Չեն նըւիրուիր արփիագեղես բրնուրեան, Այլ կը զոհուին Մամոնայի գերութեան . . .

ՄԵՆՐԻԿ

ԴԻԻԱՆ ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԱՅ

ԺԳ

Յովնաննէս Մուղնեցի(*)՝ Կ. Պոլսէն
առ եղիազար Այնրապցի, ի Հալեպ(**)։

Գերերջանկագոյն և յոյժ պայծառագոյն երանաշնորհ և յոգնահանճար եղբոր իմոյ սիրեցելոյ և յաւէտ բաղձալուոյ, լոյս աշացս և մխիթարութիւն անձինս տեառն եղիազարու աստուածաբան և բանիբուն բարունուոյ մեծի, նուազած ծառայ Քրիստոսի Յովհաննէս անուամբ և և թ պաշտօնեայ բանի՝ մատուցելի զողջոյնն միաբար և սէր յարազմայլաբար յոլով կարօտիւ և անյազ տենչմամբ, անքակ յարակցութեամբ ըստ Տեառն պահանջման՝ քեզ և որոց առ քեզ կան խաղաղութեամբ կալ մնալ ի խնամս Տեառն և ի նոյն յարամնալ։

Ընդ ողջունական տրակիս գիտութիւն լիցի մեծի խոհականութեան քում, զի բընական սէր մեր և հարազատական անխարդախ միաբանութիւն, զոր ի միջի մեքում կայր, քաջայայտ իսկ է քեզ, որ խղիւղութեան պատճառ ոչ այլ ինչ եղեւ՝ եթէ ոչ սուտակասպաս և թունալիր նենգաւոր արք սպրդողք և օժտողաբար պատուողք, որոց ունկնդիր լինելով իմ բարեկամ համարեցայ, և անխարդախ սէրք և անմիջաց հարազատ բարեկամութիւնք թողի և ոչ ծանեայ զսէրք իմով մօլեկոնութեամբ, խաբեբայից արանց, որպէս անիծից որդւոյ Բահամ չՅակոբին և նըմանեաց նոցին, և ի վերայ այնքան յետս չողալոյ իմոյ իրնական սիրոյք և զանց առնելոյ, յաւելիր առ իս անոխակալութեամբ, որ Իստամպուլի Գիտուել Յովհաննէսն առաքեալ էիր առ իս միջնորդ վասն միաբանութեան և վերստին հաստատման սիրոյ, և ես ոչ գիտացի և ոչ ծանեայ ըզսէրք, զանց առնելով զբանիւ քով, և

(*) Յովհաննէս Մուղնեցի եղած է պատրիարք Կ. Պոլսի 1652 — 1655։ Ծ. 2.

(**) Նամակիս ընդօրինակութեան տակ ծանօթագրուած է այսպէս. «Մուղնեցի Յովհաննէս վարդապետին իւրով կնքովն գրեալ մեղայի թղթին սատան է առ մեզ կացեալ»։ Ծ. 2.

այնու ևս ոչ հնատ սէր քո յինէն, զուանձամբ անձին եկիր առ իս ի սուրբ Աստուածածնի եկեղեցին և բերան առ բերան սասցեր զխորհուրդ քո վասն միաբանութեան և սիրոյ նորոգման, և այնու ևս ոչ ծանեայ իմով մոլեկոթութեամբ, որոյ պատիժ և պատուհանն է, զոր կրեմ այսքան ժամանակ վասն ոչ ճանաչելոյ զբարեկամի իմ հարազատ, զոր ահա տասն տարի է տանջիմ, հաշիմ և մաշիմ և հառաչմամբ սրտիւ աղաչաւեմ ի ներքոյ խղճ մտաց հոգեկանաց, և մարմնական անյաջող և տառապեալ կենցաղովաբութեամբ: Ըստ այսց ոչինչ ունիմ ասել, այլ՝ մեղա՛յ յերկինս և առաջի քո, զի այժմ մտածեմ և խորհիմ զսէր քո՝ թէ՛ ո՛րպէս թողի և մեղայ առ քեզ. ինչորեմ թողութիւն չնորհել իմոց մեղանաց և աղաչեմ միտքարել զիս բանիւ մեծի խոհականութեան քո, քանզի անպատմելի արամութեան միջի կամ ևս անմխիթար կենօք ի ձեռն արարմանց ճշմարտախօս երկրորդ ար աւորչիս(?), որ առ մեզ՝ թէ՛ ո՛րքան չարիս և վէրս հատոյց մեզ իւրով նենգութեամբ առ միամտութիւն իմ: Նախ և առաջին յիստամպօլու անկումն իմ նա եղև պատճառ, և անտի կամեցայ ելանել զէպ ի Ֆոսանկատուն յապաւէն լինել ի քեզի(?) ինչ. սա աստուատ ողբի աղբի պատրուակ թղթով զարձոյց առ այսր, ևս մեր տեսեալ ի զերազոյն պատուոյ և փառաց անկեալ՝ հաւուց բընոյ էհտաճ եղաք, խարէութեամբ և պատրանօք զմեզ եղիր ի Հաւուց Թաոոյ վանքըն, և յետ երկուց ամաց, զեռ ևս ոչ լրման՝ սպրդեալ հմուտ առ ժողովուրդն նենգութեամբ և յարոյց ի վերայ իմ պէս պէս բարուրանօք և անտի հնան զմեզ անարդանօք: Յայնժամ կամեցայ ելանել և զետեղիլ ի յանապատն Սողմոսաւանից կամ Յոհանաւանից քանի մի եղբարբք, և անդ ևս ոչ եթող, այլ պէս պէս հնարիւք և միջնորդիւ բազմաւ և ահագին երգմամբ և չարաչար ուխտադրութեամբ հաւատացոյց զմեզ և կարգեաց աթոռակալ մինչ ի տարի ուկէս: Թէ՛ ո՛րքան տառապանք և նեղութիւն կրեցի ի ներքոյ անտանկի զործոյ աթոռոյն միամտաբար՝ ծածկաղլտին է յայտնի: Յայնժամ տեսի՝ մեծահանգէս սիւնհոդոս արար, մինչև Գանձասարու փէրն ևս եբեր՝ թէ՛ օրէնք կամիմ հաստա-

տել: Ես միամիտ լինելով՝ սա վասն իմ է եղեալ նենգութիւն զործեալ և այնպէս մեծահանգիսիւ և ևս պէս պէս բարուրանօք և զբարաբութեամբ յաթոռակալութենէ ձգեաց: Այնուհետև ժամանակ ինչ Ոնոփրիտսին կամակից և խորհրդակից և զործակից կարգաց զմեզ, և այնու ևս ոչ չառացաւ. վերստին զարան զործեալ այլ իմն հնարիւք և չարաչար երգմամբ հաւատացոյց զմեզ բազում միջնորդիւ, և մերով թեւօք բոլի որդի մի յառաջ քարչեաց, զմեզ խարելով՝ թէ՛ քեզ ծառայ ետու զսա: Փոխանակ նորա՝ զմեզ ծառայ տրար իւրն, մեր թեւ և թիկունք լինելով նմա՝ աշխարհ ամենայն կարկեցան. և ինքն ելեալ թուաւորական հրամանաւ և բոլոր աշխարհի հրատարակութեամբ յերուսաղիմայ անուամբ զժողովուրդն կեղեքելով հնաս մինչ ի Թոխոթ, և անտի մէկ արեղայի խօսքով, այսինքն Շալպանի տղային՝ զարձեալ եկն աստ և զժողովեալն յերուսաղէմայ անուամբ իւրն պարխոս պառալ նստեր է և ընդ մեզ մարանչի բարուրանօք և նենգութեամբ, և մեք մնացեր եմք ալեկոծեալ և տոտանեալ ի ներքոյ տարակուսանաց. մանաւանդ սուրբ Գէորգայ վանից եկեղեցւոյն(*) շինութիւնն ևս ինքեամբ ոչ ունէի կարողութիւն, պէս պէս հնարիւք և նենգալիւ յուսադրութեամբ հարկ եղ ի վերայ մեր, որով յուսով սկիզբն արարաք քարն հատել տըւաք և կիրն այրեցաք, մինչև Ծ. Թուման խարճ և պարտք եմք անկեալ: Այժմ այնպէս տրեան թշնամութիւն ձգեալ ի մէջ մեր, և մեք մնացաք ի ներքոյ կեղեցւոյն ամօթանաց և տարակուսանաց. ոչ զիտեմք զի՛ արարից, վասն զի ոչ ունիմ աստ իսկապէս խորհրդակից և ցաւակից հաւատարիմ բարեկամ և ոչ մխիթարիչ, այլ միայն յոյս և ակնկալութիւն մը խիթարութեան զԳրիստոս ունիմ յերկինս և ի վերայ երկրի զիսկապէս անխարդախ հարազատդ. քանզի յոյս կողմանց ամենից՝ թէ՛ ընկերակցաց, թէ՛ քան զմեզ մեծամեծաց և փոքրագունից, թէ՛ եկեղեցականաց, թէ՛ ժողովրդականաց, թէ՛ հաւատացելոց և թէ՛ աշխղզաց՝ յամենեցունց կարէվէր խոցեալ կամ անբուժելի, ևս առա-

(*) Սամաթիոյ Ս. Գէորգ եկեղեցւոյ մասին է խօսքը: Ի. Լ.

ւել սուրբ Գէորգայ վանիցս շինութիւնն, որ ձեռն արկաք, այժմ սա այսքան հա- կառակ թշնամի եղև մեզ, տաճարատակ առաւել վէրք եղև ինձ անբուժելի և տա- րակոյս անդերձանելի: Իցե՞ արդեօք զի յկատուծոյ եղև վերստին յիշումն սիրոյ քո առ մեզ և նորոգումն հարազատութեան, զի անուն քո արձանանայ ի սուրբ եկեղե- ցիս Գէորգայ զօրավարին և ոչ այլոց, թէ՛ բանիւ, թէ՛ դորձով, թէ՛ արդեամբք և թէ՛ զմեզ առ քեզ ածելով հարազատորէն և թէ՛ ինչ կերպիւ որ է, որով ահեղով վիրաց ի- մոց բուժումն գտից: Վասն որոյ տարա- կուսանաց իմոց և անբուժելի վիրաց ա- զաչեմ ի հարազատ սիրոյ քո, զի ըստ քում բազմահանճար գիտութեան խկապէս զիւս իրացն և զհնարս բուժման վիրաց գտցես և ծանուցես հարազատորէն՝ այնպէս ա- րասցուք: Դարձեալ Սարգիս վարդապետին կողմանէ, զոր գրեալ էիր յառաջագոյն, որ եկն աստ, խորագէտագիտութեամբ սկսաւ տեղւոյս առաջնորդ եղեալքն որսալ, փոխանակ որսալոյն զայլս՝ յիւրայոցն ևս յետնեալ գտաւ: Բայց այսքան ժամանակ յերկարելոյն պատճառ այս է, որ յորս պատահեցաւ՝ բազումս պահանջեաց, և սակաւս ևս լրապէս ոչ տուաւ: Բայց ի սակաւուն բազում ինչս ժողովեաց ևս ի զուր վատնեաց, զորս կաշառ տալով ևս զորս բաշխելով ևս զորս պէս պէս պատ- ճառեաց: Իսկ զալստեանն կողմանէ առ քեզ, թէպէտ ըստ քում բանի բազում անգամ ստիպեցի, բայց անուամբ ևս չի հայրս մեր հոգեւոր ոչ ի թողութն է թողու- զալ և ոչ յըմբռնելն, զի յերկուց կողմանց երկիւղ ունի ըստ իւր առնելոյն, զոր առ- եալ է ի նմանէ և կերեալ: Գու խորագոյն գիտես: Իսկ եթէ սորա գալստեանն որ- քան ստիպեցի և փոյթ ունէի, ի Յակոբ վարդապետէն տեղեկասցիս: Այլ և իղձք և վէրք սրտի իմոյ ոչ կարեմք ընդ գրով ճառել, միթէ Աստուածն ամենայնի աշո- ղեացէ, որ բերան առ բերան պատմեցից, յայնժամ գիտացես զհաւաստին: Բայց ազաչեմ և խնդրեմ և բազմաօք հայցեմ յեղբայրութենէդ, զի անդրադարձումն թղթոյս և զվիրաց իմոց բուժման պատաս- խանին հնարի փութով հոգասցես, որոյ վասն կաթողին կամ: Նաև շնորհակալ եմ հարազատութենէդ, որ սիրոյ նշան բնա-

յիւ յիշեցեր զմեզ և ուրախ արարեր սի- րով քո: Ողջ լի՛ր առ Սուրբ Հոգին: Նաև ողջոյն կարօտական մատուցանեմ աչացս լոյս և հոգւոյս հոգի Սուքիոս վարդապե- տիդ գրկախառն համբուրմամբ և խնդրեմ զի շաղկապ սիրոյ լիցիս ի մէջ մեր և վար- զապետին և զգրեալս յարածամ արձա- նացուցես յունկս վարդապետին, և կրկի- նապատիկ ընթերցես զգրեալս առաջի վարդապետին: Ահա Յակոբ վարդապետն եկ ի քո սրբութիւնդ բազում խորհրդամբ զոր ինչ ի քէն պատմեաց մեզ մի ըստ միո- ջէ, և մեք ըստ այնմ զպիտանի խոր- հուրդսն ծածկարար պատմեցաք առ սըր- քութեանդ քո: Կրեցաւ ի թվին ՌՃ և ԺԺ. (= 1664) ի նոյնմբեր ամսոյ ի Դ. ին:

ԺԴ

Յովնանենա Մուղնեցի Կ. Պոլսէն՝

առ եղիազար վարդապետ ի Հալեպ(*).

Սրբանքէր և երջանկապատիւ պառ- ծաղի և մեծագոյն եղբոր մերոյ Եղիազար վարդապետիդ նուազ և տառապեալ Յով- նանէն բանի սպասաւոր ողջոյն մատու- ցանեմ գրկախառն համբուրիւ, հարցանեմ ըստ բազմանաց զօրպիտութիւն ցանկո- լոյդ՝ թէ զի՞ւրդ կաս և կամ քաղաքավա- րիս: Իսկ զիմա պատահարք և թէ զի՞նչ նիցես հարցանել՝ ցղա իսկ հարցցես, որոյ յանձնեցաք զնամակս և զօրպիտութիւնս մեր ասել: Յուշ լիցի քեզ վասն Ռնոփրիոս վարդապետիս, զոր տարադէպն եկն առ քեզ, քանզի սկզբնաւորն սատանայ(**) ոչինչ եթող, զոր ոչ թափեաց զթիւն իւր ի ձեռն արբանեկաց իւրոյ ի դա. վասնզի յամե- նայնէ զրկեալ գտաւ, թէ յլստացուածոց և թէ յիշխանութեանց միանգամայն սու- տակապառ բարեկամաց. ևս ի ձեռն այլ- տգրեաց այնքան ցաւեալ տառապեցաւ,

(*) Նամակի ընդօրինակութեան լուսանցքին վրայ ծանօթագրուած է այսպէս. «Նոյն Մուղնեցի Յովնանենա վարդապետին գրեալ աղաչանաց զիւր վասն Կարկու(տ) (Ռնոփրիոս վարդապե- տի) վաղահալիլոյն»:

(**) Կ'ակնարկէ Զուգայեցի Յակոբ Դ. կաթո- ղիկոսին, որուն հակառակորդաց խումբին մէջ կը գտնուէր Ռնոփրիոս վրդ. Կարկուտ: Դ. Հ.

մինչ իւր ընտանիքն ևս թալանեալ կողապետեցան՝ թէ՛ ի յայգոյ, թէ՛ ի դարգոյ, թէ՛ ի դրամէ, այժմ ի ներքոյ ծանրաբեռն պարտուց կան անկեալ՝ ոչինչ ունելով յոյս փրժանաց, միայն յԱստուած ապաւինեալ զիմեաց առ զուրկ հղբորդ սիրելոյ։ Եւ զի խնդրեմ, ո՛վ տենչալի եղբայր իմ, թէ զանց արարեր զյանցանս մեր որ առ քեզ, զայս լիցի նշան, որ զթով եռացեալ հայեսցիս ի դա (որ) քան զմիկղջերոյ զիմեաց առ աղբիւրդ յորդառատ, և զոր ինչ առ դա ցուցանես՝ ինձ է համարեալ և առ իման։ Դանդի ոչ է զանդաղելի բժշկին բժշկել զխօթացեալս, և զի կարծեմ թէ դու ևս կամիցիս միաւորել զովաւ զհեռացեալսն ի քէն։ Դարձեալ զՍարգիս վարդապետի զալն, թէ ժողովին, թէ շարժմունքն մի ըստ միովէ՝ թէ յորմէ զինչ պատահեցաւ նմա և թէ ո՛րպէս վատնեցաւ ժողովեալ զինչսն և կամ թէ յեւանելն զորա յերկրէ ո՛րպէս եղև՝ զիսկութիւնն յմոտփրկոս վարդապետէս իմասցիս։ Եւ դարձեալ ըստ թըղթոյ պատասխանին, որ ընդ Յակոբ վարդապետին, զպատասխանին խնդրեմ մի յամեցուցես։ Ողջ լիւր առ զլուսն համայնից գլուխդ երջանկաց, բաւ է։

Դրեցաւ նամակս ի թըւահաշտութեան մերոյ ՌՃԺԿ (= 1664) յամսեանն նոյեմբերի ի Իէ։ Ողջոյն տառապեալ հօրէս առ սիրեցեալ որդին իմ Սուքիաս վարդապետին։

Հրատարակեց՝ Մ. Ե. Ն.

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

Պ. Մ. Թ., St. Aubin. — Ս. Նեբրսկա Լամբրոնացիի Թուրքը՝ առ Ոսկան ձգեալու՝ հրատարակուած է Ս. Արքուդոս սպարապետ, 1842ին, հեղինակին «Խորհրդածութիւն Սրբազան Պատարագի» գիրքին կցուած յաւելուածական էջերու մէջ (21-27)։ Ձեր զրկած օրինակը տպագրեալին հետ համեմատելով տեսանք որ տեղեկ կը սրբագրեն գիրաւ։ — Առ այժմ կը մնայ մեր մօտ ի պահ։

ԽՄԲ.

ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ ՕՐ, 1932, Փարիզ, էջ 154, գին 10 ֆր.։ Հրատարակեց Հայ Գրական Ակումբի Կեդրոնացիի՝ Գրասէն Հրանդ-Սամուէլ, 51 Rue Monsieur le-Prince, Paris (VI)։

Փարիզի Հայ Գրական Ակումբը հիմնուած է 1928 ին, խումբ մը մտաւորականներու նախաձեռնութեամբ։ Ակումբին նպատակն է իր անդամներուն և հայ հասարակութեան մտաւոր զարգացման նպաստել, քաղաքականօրէն չհղձիկ զեանի վրայ և սիրոյ մթնոլորտի մը մէջ, Իր չորս տարուան դոյութեան ընթացքին Ակումբը բացառապէս Փարիզի հայութեան մատուցած է մտաւորական գնահատելի ծառայութիւն մը իր մօտ 80 զեկուցումներով, դասախօսութիւններով, եւայլն։ Այսօր Ակումբը աւելի կ'ընդարձակէ իր ծառայութեան դաշտը՝ հրապարակ հանելով, Հայ Մշակոյթի Օրուան առթիւ, մասնաւոր հատոր մը։ Հետեւեալ տողերով կը ջանանք զազափար մը տալ Սիւնի ընթերցողներուն, այս հրատարակութեան շահեկան բովանդակութեան մասին։

«Երկու Խօսք»-ին մէջ, որով կը բացուի հատորը, կը շեշտուի արժէքը մշակոյթին և կարեւորութիւնը Մշակոյթի Օրուան, որ տարուէ տարի աւելի լայն ժողովրդակա-նութիւն կը զանէ հայ գաղութներու մէջ։

Դիրքը թղթատելու ատեն հաճելի է տեսնել քով քովի անունները գրչի մշակներու, Թէքէեան, Ահարոնեան, Զօպանեան, Բերբերեան, եւայլն, որոնք միացած են Հայ Մշակոյթի վեհ զրօշին ներքեւ։

Արժէքաւոր գրութիւններ չափ են հաւաքածոյին մէջ, եւ կարելի չէ միաւորի դրաղիւ տնոնց բոլորին հետ։ Ուստի պիտի բաւականանանք ատենց մէջէն մի քանի հատը միայն ներկայացնելով։

Ուշագրաւ գրուած մըն է Պրոֆ. Նիկ. Աղոնցի «Հայ Մշակոյթի Սկզբնաւորութիւնը» խորագրով յօդուածը (էջ 33-40), որ կը բաղկանայ երեք մասերէ։ Ա. մասին մէջ հմուտ բանասէրը կը զբաղի Կորիւնի Պատմութեան վերջը գտնուող ժամանակագրական ծանօթութեանց պարզաբանութեամբ. բնագրին վրայ կարեւոր սրբագրութիւններ ընելէ յետոյ Մաշթոցի քահանայութեան և գրի վիւտին թուականները հե-